ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

« ՇՀԾՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-16/1 » ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար ինտերնետային կապի ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.12.2015թ. ժամը 12-00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա. Հովսեփյանը, Վ.Պետրոսյանը, Ա.Հակոբյանը, Է.Ստեփանյանը և քարտուղար Գ. Մանուկյանը: Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

« ՇՀԾՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-16/1 » ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «Յուքոմ» ՍՊԸ (ք. Երևան, Տերյան 19, բն. 4)

2. «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ (ՀՀ, ք. Երևան, Արգիշտի 4/1)

3. «ԱրմենՏել» ՓԲԸ (ք. Երևան, Ահարոնյան 2)

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 28.12.2015թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. «Յուքոմ» ՍՊԸ, «ԱրմենՏել» ՓԲԸ և «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 «Յուքոմ» ՍՊԸ, «ԱրմենՏել» ՓԲԸ և «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Ապրանքի անվանումը			Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/
		«Յուքոմ» ՍՊԸ	«ԱրմենՏել» ՓԲԸ	«Ղ-ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ
1	Ինտերնետային կապի ծառայություն	1080000		
2	Ինտերնետային կապի ծառայություն		975000	
3	Ինտերնետային կապի ծառայություն		975000	
4	Ինտերնետային կապի ծառայություն	270000		
5	Ինտերնետային կապի ծառայություն		738000	750000
6	Ինտերնետային կապի ծառայություն			1020000

5. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Հանձնաժողովը որոշեց՝

1. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 11.00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Հովսեփյան

_____ Է. Ստեփանյան

_____ Վ. Հարությունյան

_____ Ա.Հակոբյան